# Երևանի Մ.Հերացու անվան
# Պետական Բժշկական Համալսարան

## ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ՀԱՐՑՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Կրթության որակի գնահատման
և ապահովման կենտրոն
30.01.2026թ.

**Կրթական ծրագիր՝** «Առողջապահության կազմակերպում և կառավարում» մագիստրոսական ծրագիր

**Մասնակիցներ՝** ծրագրի շրջանավարտների գործատուներ

**Սույն վերլուծությունը նպատակ ունի գնահատելու «Առողջապահության կազմակերպում և կառավարում» մագիստրոսական ծրագրի շրջանավարտների** մասնագիտական պատրաստվածությունը՝ գործատուների դիտարկումների հիման վրա:
Վերլուծությունը կարևոր է՝

- կրթական ծրագրի վերջնարդյունքների համապատասխանությունը աշխատաշուկայի պահանջներին գնահատելու,
- ծրագրի ուժեղ և թույլ կողմերը բացահայտելու,
- բարելավման ուղղություններ սահմանելու համար:

Հարցմանը մասնակցել են **15 տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներ**, ինչը թույլ է տալիս ստանալ համեմատաբար բազմազան և հավաստի կարծիքներ՝ պետական, մասնավոր և ոչ կառավարական հատվածներից:

Հարցմանը մասնակցել են 15 կազմակերպության գործատուներ՝

1. ԻՀԱԿ
2. Ուռուցքաբանության Ազգային Կենտրոն
3. Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն
4. Դիամեդ բժշկական կենտրոն
5. ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին
6. Երեմյան Ֆարմ ՓԲԸ
7. Ուիգմոր գրուփ
8. ClinChoice
9. Պրոտոն ախտորոշիչ և գիտակրթական կենտրոն
10. «Երևանի «Մանկան տուն» ՊՈԱԿ
11. National Ilnatitute of Health, Dep. of Public Health and Health Administration
12. ԿլինՉոյս ՍՊԸ
13. Առողջապահության նախարարություն
14. Երևանի պետական բժշկական համալսարան
15. «Ձեռքդ Տուր» սոցիալ-կրթական ՀԿ

Հարցման մասնակից կազմակերպությունները ներկայացնում են՝

- պետական կառույցներ (ԱՆ, ՀՎԿԱԿ, տեսչական մարմիններ),
- բժշկական և ախտորոշիչ կենտրոններ,
- մասնավոր ընկերություններ (ֆարմացիա, միջազգային կազմակերպություններ),
- կրթական և սոցիալական կազմակերպություններ:

Սա վկայում է, որ շրջանավարտները ներգրավված են տարբեր ինստիտուցիոնալ միջավայրերում, և ծրագրի արդյունքները դիտարկվում են տարբեր տեսանկյուններից:

Ստորև ներկայացվում է հարցաթերթի յուրաքանչյուր հարցի վերլուծությունը և գործատուների կողմից արված մեկնաբանություններն ու առաջարկությունները:

1. **Կազմակերպության տեսակը**




2. **Ո՞ր տարբերակը լավագույնս բնութագրում է Ձեր դերը կազմակերպությունում**




3. Քանի՞ տարվա փորձ ունեք ԵՊԲ ՀԱՖ մագիստրոսական շրջանավարտներին ղեկավարելու /աշխատավայրում վերահսկելու գործընթացում




4. Ձեր ենթակայության տակ եղած շրջանավարտների քանակը




## 5. Ընդհանուր աշխատանքային արդյունավետությունը




## 6. Կարողությունները աշխատանքի ընդունվելու պահին




7. **Ա շ խատաշ ու կայ ի պահ ան ջ ն ե ր ի ն հ ամ ապատաս խան ու թյ ու ն**




8. Մ ո տավ ո ր գ ն ահ ատմ ամ բ հ ան ր այ ի առ ո ղ ջ ապահ ու թյ ան մ աս ն ագ ե տի ն առ աջ ադ ր վ ո ղ ու ն ակ ու թյ ու ն ն ե ր ի ծ ավ ալ ի ո ՞ ր տո կ ո ս ի ն ե ն տի ր ապե տո ւ մ Հ Ա Ֆ մ ագ ի ս տր ո ս ակ ան ծ ր ագ ր ի շ ջ ան ավ ար տն ե ր ն աշ խատան ք ի ը ն դ ո ւ ն վ ե լ ո ւ պահ ի ն




9. Ընդհանուր բավարարվածություն ՀԱՖ մագիստրոսական ծրագրի շրջանավարտներով




10. Կշարունակե՞ք ընդունել աշխատանքի ՀԱՖ մագիստրոսական ծրագրի շրջանավարտներին




**11.** Որո՞նք են այն հմտությունները կամ ոլորտները, որոնք անհրաժեշտ է ուժեղացնել (մեկնաբանությունները ներկայացվում են առանց խմբագրման)

- ✓ Տվյալների վերլուծության պրակտիկ գիտելիքներ և առողջապահական ոլորտի իրավական դաշտի խորը ուսումնասիրություն
- ✓ Microsoft package and project management tools
- ✓ Լեզուների իմացություն,վիճակագրություն
- ✓ Միջազգային առողջապահական չափորոշիչների իմացություն
- ✓ Կազմակերպում եվ կառավարում
- ✓ Սննդի անվտանգություն փոխկապակցվածությունը մարդու առողջության հետ
- ✓ բուժառուների անվտանգություն և սպասարկման որակ
- ✓ English, communication skills, listening skills
- ✓ առողջապահական որակ
- ✓ Մարդկային ռեսուրսների կառավարում
- ✓ Overall vision exceptional ability and analytical skills

- ✓ Առողջապահական համակարգերի ու քաղաքականությունների ընկալում,Թվային և վերլուծական հմտություններ
- ✓ ԱԷելացնել պրակտիկա
- ✓ Լրացուցիչ առարկաներ,օրենքները խոր ուսումնասիրություններ

12. Որո՞նք են ՀԱՖ մագիստրոսական ծրագրի շրջանավարտների հիմնական առավելությունները

(մեկնաբանությունները ներկայացվում են առանց խմբագրման)

- ✓ Բժշկական background
- ✓ Multitasking abilities
- ✓ Ունեն տարբեր նախնական կրթություննր,ինչը օգնուն Է իրենց ավելի հեշտ և շուտ կողմնորոշվել աշխտանքի և ոլորտի մեջ
- ✓ Բազմակողմանի գիտելիքներ և կիրառական հմտություններ
- ✓ Կազմակերպչական
- ✓ Տիրապետումը մարդու առողջության և սննդի անվտանգության ռիսկերը
- ✓ վերլուծական հմտությունները
- ✓ Medical-biological education
- ✓ պատասխանատվություն. գրագիտությւն
- ✓ Թիմային մոտեցում,ժամանակի արդյունավետ կառավարում
- ✓ Competency, healthcare systems paramount understanding
- ✓ Առողջապահության ոլորտի համար արդիական հանրային առողջության մարտահրավերների պատկերացում,դրանց արձագանքել ու ուղղությամբ պլանավորման ունակություն:
- ✓ Մասնագիտական բարձր պատրաստվածություն

- ✓ Հանրային մտածողությունը

13. Ի՞նչ առաջարկներ ունեք ծրագրի բարելավման համար (առաջարկությունները ներկայացվում են առանց խմբագրման)

- ✓ Ավելացնել գործնական կոմպոնենտը և ունենալ համագործակցություններ տարբեր առողջապահական կազմակերպությունների հետ ուսանողների պրակտիկան կազմակերպելու համար
- ✓ Include structured training in modern project management tools, professional email communication, and proper documentation etiquette.
- ✓ Պրակտիկ աահխատանքներում ընդգրկում ուսման ընթացքում
- ✓ Պարտադիր պրակտիկա պետական կառույցներում: Համատեղ դասընթացներ կամ մոդուլներ արտասահմանյան համալսարանների հետ:
- ✓ Առաջարկներ չունեմ
- ✓ Սննդամթերքի անվտանգության համակարգերի ինտեգրում
- ✓ բուժառուների անվտանգություն և սպասարկման որակ-ի չափանիշների հստակ իմացություն,ներդրում
- ✓ Ժամանակակից հանրային առողջապահական կուրսերի ներդրում
- ✓ Թիրախային դասընթացների ժամանակի ավելացում
- ✓ Դասընթացի ավարտին գնահատումն իրականացնել ոչ տեստային,այլ այլընտրանքային տարբերակով:
- ✓ Ամեն ինչ լավ է

- ✓ Կրթական, սոցիալական եւ առողջապահական ոլորտների շղթայական կարեւորությունը բարձրացնող առարկաներ, որոնք են վարքագծային փոփոխությունները, որոնք անդրադառնում են առողջության պահպանմանը

**Ամփոփում**

Հարցաթերթում առկա հարցերը թույլ են տալիս գնահատել հետևյալ առանցքային չափանիշները.

- ընդհանուր աշխատանքային արդյունավետությունը,
- աշխատանքի ընդունվելու պահին շրջանավարտների կարողությունները,
- աշխատաշուկայի պահանջներին համապատասխանությունը,
- գործատուների ընդհանուր բավարարվածությունը:

Պատասխաններից կարելի է փաստել, որ ընդհանուր բավարարվածությունը բարձր է, և գործատուների մեծ մասը պատրաստ է ծրագրի շրջանավարտներին շարունակել ընդունել աշխատանքի:

**Գործատուների կողմից առանձնացվել են մի շարք կայուն ուժեղ կողմեր**.

- բժշկական և բժշկակենսաբանական բազային կրթություն,
- բազմակողմանի գիտելիքներ և վերլուծական մտածողություն,
- հանրային առողջության արդիական մարտահրավերների ընկալում,
- թիմային աշխատանք, ժամանակի կառավարում,

- պատասխանատվություն և մասնագիտական գրագիտություն:

Սացույց է տալիս, որ կրթական ծրագիրը թողարկում է համակարգային մտածողությամբ մասնագետներ, որոնք ունեն հանրային առողջապահական խնդիրների նկատմամբ լայն տեսլական:

**Բացահայտված հիմնական բացերը և ուժեղացման կարիք ունեցող ոլորտները**

Գործատուների մեկնաբանությունների վերլուծությունը թույլ է տալիս խմբավորել բացերը մի քանի հիմնական ուղղություններով.

**Գործնական և վերլուծական հմտություններ**

- տվյալների վերլուծության պրակտիկ գիտելիքների պակաս,
- վիճակագրության և թվային գործիքների խորացման անհրաժեշտություն,
- պրակտիկ աշխատանքի ծավալի ավելացման պահանջ:

**Կառավարչական և կազմակերպչական կարողություններ**

- project management գործիքների կիրառման անհրաժեշտություն,
- մարդկային ռեսուրսների կառավարման հմտությունների զարգացում,
- առողջապահական համակարգերի և քաղաքականությունների ավելի խոր ընկալում:

**Իրավական և որակի ապահովման ոլորտներ**

- առողջապահական օրենսդրության խոր ուսումնասիրություն,

- բուժառուների անվտանգության և սպասարկման որակի չափանիշների իմացություն:

**Ծրագրի բարելավման վերաբերյալ առաջարկների համադրական վերլուծություն**

Առաջարկությունները հիմնականում կենտրոնանում են հետևյալ ուղղությունների վրա.

1. **Պրակտիկ բաղադրիչի ուժեղացում**
   - պարտադիր և շարունակական պրակտիկա,
   - համագործակցություն պետական և մասնավոր կառույցների հետ:
2. **Դասընթացների արդիականացում**
   - ժամանակակից հանրային առողջապահական կուրսերի ներդրում,
   - առողջապահական համակարգերի ,սննդի անվտանգության և որակի չափորոշիչների ինտեգրում:
3. **Միջազգային բաղադրիչ**
   - համատեղ մոդուլներ արտասահմանյան համալսարանների հետ,

**«Առողջապահության կազմակերպում և կառավարում» մագիստրոսական ծրագիրը ընդհանուր առմամբ դրական է գնահատվում գործատուների կողմից**, սակայն առկա է հստակ պահանջ՝

- բարձրացնել գործնական կողմնորոշվածությունը,
- խորացնել վերլուծական և թվային հմտությունները,
- ամրապնդել կապը աշխատաշուկայի որոշ պահանջների հետ: